Կոնտակտային տվյալներ

«Նորարարությունների և բարեփոխումների կենտրոն» (IRC) հասարակական կազմակերպություն (եթե Դուք քաղաքացիություն չունեցող անձ եք)

«Նորարարությունների և բարեփոխումների կենտրոնը» UNHCR-ի գործընկեր կազմակերպություն է, որն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց:

Հասցե՝ Դ. Գամրեկելու փողոց 2 (Աքսիս Պալասի շենք), 4-րդ հարկ, 0160, Թբիլիսի, Վրաստան

(+995 32) 255 20 01/02

(+995) 577 614 191; (+995) 577 614 199

info@irc.ge

http://www.irc.ge

Իրավաբանական օգնության ծառայություն

Իրավաբանական օգնության ծառայությունը Վրաստանում իրավաբանական օգնություն տրամադրող հիմնական կազմակերպությունն է: Անկախ Վրաստանում Ձեր կարգավիճակից՝ Դուք կարող եք դիմել Իրավաբանական օգնության ծառայություն անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

Թամար Մեպե պողոտա 14, 0112, Թբիլիսի, Վրաստան

(+995 32) 292 00 55

info@legalaid.ge

Պետական ծառայությունների զարգացման գործակալություն (PSDA)

Պետական ծառայությունների զարգացման գործակալությունը Արդարադատության նախարարության կազմում գործող պետական հիմնական գերատեսչությունն է, որը պատասխանատու է Վրաստանում ձեր կարգավիճակի վերաբերյալ վկայականներ և փաստաթղթեր տրամադրելու, ինչպես նաև քաղաքացիության համար դիմումները քննարկելու համար:

Սանապիրոյի փողոց 2, 0105, Թբիլիսի, Վրաստան

(+995 32) 240 54 05

Թեժ գիծ՝ (+995 32) 240 10 10

info@sda.gov.ge; info@psh.gov.ge

http://psh.gov.ge

Վրաստանի հանրային պաշտպան (PDO)՝ օմբուդսման

Վրաստանի հանրային պաշտպանը սահմանադրական ինստիտուտ է, որը վերահսկում է Վրաստանում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Դուք կարող եք դիմել Հանրային պաշտպանին, եթե կարծում եք, որ Վրաստանում Ձեր իրավունքները լիարժեք կերպով չեն հարգվում:

Հասցե՝ Դավիթ Աղմաշենեբելու պողոտա №150, 0112, Թբիլիսի, Վրաստան

Թեժ գիծ՝ 1481 (գործում է 24/7)

info@ombudsmen.ge

Վորլդ Վիժն Վրաստան

«Վորլդ Վիժն Վրաստան»- ը UNHCR-ի գործընկեր կազմակերպություն է, որն իրականացնում է համայնքը մոբիլիզացնելու ծրագրեր և սոցիալական աջակցություն է տրամադրում Վրաստանում ապաստան հայցողներին, փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Հասցե՝ Ա. Ցագարելիի փողոց 53, 0194, Թբիլիսի, Վրաստան

(+995) 577 045 645

multiservicecentre.wv@gmail.com

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) ներկայացուցչությունը Հարավային Կովկասում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)

UNHCR-ը Վրաստանում գործող հիմնական միջազգային կազմակերպությունն է, որը սերտորեն աշխատում է Վրաստանի պետական մարմինների հետ ապաստանի և ապաքաղաքացիության հարցերով: Դուք կարող եք դիմել UNHCR իրավաբանական խորհրդատվություն և օգնություն ստանալու համար:

Հասցե՝ Կազբեգի պողոտա 2, 0161, Թբիլիսի, Վրաստան

(+995 32) 238 62 02; (+995) 577 415 610

geotbprt@unhcr.org

Ընդունելության ժամեր՝ երեքշաբթի և հինգշաբթի, 9:30- 17:00

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ո՞վ է քաղաքացիություն չունեցող անձը:

Քաղաքացիություն չունեցողն այն անձն է, ով ոչ մի պետության կողմից չի ճանաչվում որպես քաղաքացի՝ համաձայն ներպետական օրենսդրության:

Ո՞վ է քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ հայցողը:

Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ հայցողը այն անձն է, ում քաղաքացիության կարգավիճակը/պատկանելիությունն անհայտ է և ով դիմում է ներկայացրել կարգավիճակի որոշման համար պատասխանատու պետական հաստատություն, այն է՝ Պետական ծառայությունների զարգացման գործակալություն:

Անձը հաստատող ինչպիսի՞ փաստաթուղթ է տրվում քաղաքացիություն չունեցող անձին կամ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ հայցողին:

Վրաստանում ճանաչված քաղաքացիություն չունեցող անձն ունի ժամանակավոր կամ մշտական կացության վկայական՝ կախված Վրաստանում բնակության տևողությունից:
Կարգավիճակի որոշման գործընթացում Պետական ծառայությունների զարգացման գործակալությունը դիմումատուին տրամադրում է անձը հաստատող ժամանակավոր վկայական, որը վավեր է մեկ տարի: Վկայականն ավտոմատ կերպով կորցնում է իր ուժը՝ դիմումատուին քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ շնորհելու/ մերժելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:
Եթե դիմումատուն ճանաչվում է որպես քաղաքացիություն չունեցող անձ, նրան տրամադրվում է ժամանակավոր կացության վկայական, որը վավերական է երեք տարի ժամկետով: Համապատասխանաբար, փաստաթուղթը ենթակա է նորացման յուրաքանչյուր 3 տարին մեկ:

Խնդրում ենք նկատի ունենալ. Դուք չեք կարողանա իրացնել ձեր իրավունքները և օգտվել ծառայություններից առանց անձը հաստատող փաստաթղթի:

Քաղաքացիություն չունեցող անձին շնորհվող իրավունքները և արտոնությունները

Քաղաքացիական կարգավիճակից բխող իրավունքները

Համաձայն Վրաստանի օրենսդրության՝ Դուք, որպես քաղաքացիություն չունեցող անձ, ունեք

- անունը և (կամ) ազգանունը փոխելու իրավունք (եթե Ձեր ծնունդը գրանցված է Վրաստանում)
- հայրությունը ճանաչելու իրավունք
- երեխա որդեգրելու իրավունք
- ամուսնանալու կամ ամուսնալուծվելու իրավունք
- Ձեր երեխայի ծնունդը գրանցելու իրավունք:

Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքը

✔ Նախադպրոցական կրթություն

Եթե Դուք ունեք երեխա (2-5 տարեկան), նա ունի մանկապարտեզ հաճախելու իրավունք, թեև քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող օգտվել նախադպրոցական կրթության ֆինանսավորումից:

✔ Ընդհանուր կրթություն

Եթե Դուք 6-18 տարեկան եք / ունեք երեխա (6-18 տարեկան), ապա իրավունք ունեք սովորելու դպրոցում և օգտվելու պետական վաուչերից:

✔ Բարձրագույն կրթություն

Եթե Դուք չափահաս եք (առանց տարիքային սահմանափակման), իրավունք ունեք սովորելու ինստիտուտում կամ համալսարանում: Բակալավրիական, մագիստրոսական և դոկտորական ծրագրերը հասանելի են քաղաքացիություն չունեցող անձանց համար, այնուամենայնիվ քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող օգտվել բարձրագույն կրթության ֆինանսավորումից:

✔ Մասնագիտական կրթություն

Եթե Դուք չափահաս եք (առանց տարիքային սահմանափակման), իրավունք ունեք ստանալ մասնագիտական կրթություն: Մասնագիտական կրթությունը հասանելի է քաղաքացիություն չունեցող անձանց համար, այնուամենայնիվ քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող օգտվել մասնագիտական կրթության ֆինանսավորումից:

Առողջապահական և սոցիալական ծառայությունները Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց համար

Քաղաքացիություն չունեցող անձն իրավունք ունի՝

- Օգտվելու պետական առողջապահական ծրագրերից՝ Վրաստանի քաղաքացիներին հավասար պայմաններով: Ծրագրի համար գրանցվելու նպատակով քաղաքացիություն չունեցող անձը պետք է դիմի ցանկացած բժշկական հաստատություն (առաջնային առողջապահական ծառայություններ մատուցող հաստատություն)՝ վրացական իշխանությունների կողմից տրված անձը հաստատող վավեր փաստաթղթով: Հասանելի ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել թեժ գիծ՝ 1505 կամ այցելել հետևյալ կայքէջ՝
- ստանալու պետական կենսաթոշակ (կանայք՝60 տարեկանից, տղամարդիկ՝ 65 տարեկանից)
- ստանալու դրամական սոցիալական օգնություն (կենսապահովման նպաստ)
- օգտվելու տարեցների խնամքի հաստատությունում ընդգրկվելու իրավունքից (կանայք՝60 տարեկանից, տղամարդիկ՝ 65 տարեկանից)
- օգտվելու հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի հաստատությունում ընդգրկվելու իրավունքից (պայմանով, որ Ձեր՝ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը պաշտոնապես հաստատվել է):

Սեփականության իրավունք

Քաղաքացիություն չունեցող անձն իրավունք ունի գնելու տուն / բնակարան և գրանցելու դրա նկատմամբ իր սեփականության իրավունքը:

Վրաստանում մշտական/ժամանակավոր կարգավիճակ ունեցող քաղաքացիություն չունեցող անձանց և քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ հայցող անձանց իրավունքների/ արտոնությունների և հասանելի հանրային/ մասնավոր ծառայությունների մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են հետևյալ հղմամբ՝ http://unservicemap.srvlabs.net/ka-GE :